15346

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«30» 11 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0178-22

Ձեռնարկողը՝ ***«Արթուր-Տարոն» ԲԲԸ***
Ք. Ալավերդի, Թումանյան 8.

Գործունեությունը՝ ***Ղազարասարի փուֆաավազաքարերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ, Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

Հայցվող տեղամասի կոորդինատներն են ըստ Arm WGS-84 համակարգի .

1. Y=8466220.4208 X=4556495.9970
2. Y=8466172.5585 X=4556521.0729
3. Y=8466171.7879 X=4556554.3127
4. Y=8466180.2818 X=4556635.8998
5. Y=8466185.0279 X=4556697.3619
6. Y=8466189.9860 X=4556767.9719
7. Y=8455193.9717 X=4556824.2993
8. Y=8466197.8402 X=4556854.5244
9. Y=8466197.0905 X=4556871.1414
10. Y=8466203.1281 X=4556951.0226
11. Y=8466208.2933 X=4556966.2875
12. Y=8466239.2118 X=4556989.6795
13. Y=8466326.3187 X=4556938.4583
14. Y=8466348.8053 X=4556923.0265
15. Y=8466355.7378 X=4556909.3201
16. Y=8466359.5601 X=4556885.4614
17. Y=8466356.3164 X=4556850.4949
18. Y=8466349.1675 X=4556817.1443
19. Y=8466322.1539 X=4556718.5945
20. Y=8466301.3442 X=4556654.7932
21. Y-8466265.0951 X=4556576.2853

Ղազարասարի դացիտային տուֆերն ու տուֆավազաքարերը իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով բավարարում են ԳՈՍ 9479-84 <<Блоки из приподного камня для производства облицовочных изделий>> տեխնիկական պահանջներին:

Մակաբացման և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման:

Սույն նախագծով նախատեսվում է հանքարդյունահանման աշխատանքները կատարել մեխանիկական եղանակով 5մ բարձրությամբ աստիճաններով /2 հատ 2.5մ բարձրությամբ ենթաստիճաններով/:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – 485մ,
- առավելագույն լայնությունը – 160մ,
- մշակման խորությունը – 36մ,
- օտարման մակերեսը – 5.81հա:

Օգտակար հանածոների հաշվեկշռային պաշարների քանակը – 1113050մ^3 / B – 500872մ^3, C1 - 612178մ^3/ այդ թվում՝

– շինարարական խճի հումք /ճաքճքված ավազաքարեր և դացիտային տուֆեր - 342200մ3 /B– 153990մ^3, C1 -188210մ^3/,

– երեսապատման քարեր – 770850մ3, այդ թվում՝

– ավազաքարեր - 403250մ3 /B– 181462մ3, C1 -221788մ3/,

– դացիտային տուֆեր - 367600մ3/B– 165420մ3, C1 -202180մ3/,

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0178-22

«30» 11 2022թ.

Լոռու մարզի Ղազարասարի տուֆաավազաքարերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Արթուր-Տարոն» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Աքոր բնակավայր

Ներածական մաս. Ղազարասարի հանքավայրը գտնվում է Լոռու մարզում, Ալավերդի քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք՝ Ալավերդի համայնքի Աքորի բնակավայրի վարչական տարածքում: Մոտակա բնակեցված վայրը Կաճաճկուտ գյուղն է, որի հետ հանքավայրը կապված է մոտ 10կմ երկարությամբ գրունտային ճանապարհով:

Նախատեսվող տեղամասի տարածքը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արտադրական օբյեկտների գործառնական նշանակության և գյուղատնտեսական նպատակային նշանակության հողեր են:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցոության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի՝ դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Հանքավայրի տուֆաավազաքարերի պաշարները հաստատվել են ՀՀ ՊՊՀ-ի 19.05.2000թ. N75 արձանագրությամբ.

երեսապատման բլոկների արտադրության համար

- ավազաքարեր B + C_1 կարգերով – 912,5 հազ.մ^3, C_2 կարգով – 155,9 հազ.մ^3,
- դացիտային տուֆեր B + C_1 կարգերով – 1024,5 հազ.մ^3, C_2 կարգով – 367,2 հազ.մ^3,

շինարարական խճի արտադրության համար

- ավազաքարեր B + C_1 կարգերով – 348,0 հազ.մ^3, C_2 կարգով – 101,3 հազ.մ^3,
- դացիտային տուֆեր B + C_1 կարգերով – 234,5 հազ.մ^3, C_2 կարգով – 34,7 հազ.մ^3:

Նախագծված բացահանքի օտարման տարածքը կազմում է 5,81հա: Բացահանքի տարեկան արտադրողականությունը երեսապատման բլոկների արտադրության համար ընդունված է 35000մ^3 համախառն զանգված: Ծառայման ժամկետը կազմում է 20 տարի:

ՀՀ ԲՆՕՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆՕՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՊ ԲՆՕՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՈԱԿ
ՀՀ ԲՆՕՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՊ ԲՆՕՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՊՈԱԿ
ՀՀ

- օգտակար հանածոների արդյունաբերական պաշարների քանակը – 995050մ3/B– 447773մ3, C1 -547277մ3/, այդ թվում՝
Շինարարական խճի հումք /ճաքճքված ավազաքարեր և դացիտային տուֆեր/ - 291700մ³/B–131265մ³, C1 -160435մ³/,
– երեսպատման քարեր – 703350մ3, այդ թվում՝
– ավազաքարեր - 389750մ3/B–175388մ3, C1 -214362մ3/,
– դացիտային տուֆեր - 313600մ3/B–141120մ3, C1 -172480մ3/,
- մակաբացման ապարների քանակը – 151700մ3, այդ թվում՝
– ժամանակակից առաջացումներ - 40900մ3,

Մակաբացման աշխատանքներից նախ ժամանակակից առաջացումները Чебоксарец-4330 բուլդոզերով մշակվում ու տեղափոխվում են 15-20մ հեռավորության վրա ու կուտակվում: Այնուհետև HITACHI-350 էքսկավատորով բարձվում է KpA3-256 ավտոինքնաթափի մեջ ու տեղափոխվում ժամանակավոր արտաքին լցակույտ: Տուֆաբրեկչիաները NEW HOLLAND-265 էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճով նախնական մշակվելուց հետո տեղափոխվում են արտաքին լցակույտ ու պահեստավորվում առանձին:
Մակաբացման ապարների արտադրողականությունը հաշվարկային տարում ընդունված է 7500մ³/տարի:

Հանքարդյունահանման աշխատանքները բացահանքում նախատեսվում է կատարել աշխատանքների սեզոնային ռեժիմով: Աշխատանքների օրերի քանակը տարում ընդունված է 180 օր, հերթափոխերի քանակը օրում -1, հերթափոխի տևողությունը - 8ժամ:

Բլոկների արդյունահանման ժամանակ առաջացած թափոնները 131,28մ³ /հերթ ծավալով Чебксарец-4330 բուլդոզերով տեղափոխվում են միչև 15-20մ, կուտակվում աշխատանքային հրապարակում, այնուհետև 1,2մ³ շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձվում է ավտոինքնաթափերը ու տեղափոխվում մինչև 2կմ հաշվարկային հեռավորության վրա մոտեցող ավտոճանապարհների բարեկարգման համար ինչպես նաև մշակման արտադրամաս:

Մինչև բացահանքի շահագործման 3,2-րդ տարվա վերջը՝ (2150մ աստիճանը մշակելու վերջը) լցակույտային ապարները 11600մ³ քանակով (այդ թվում ժամանակակից առաջացումներ 10400մ³, տուֆաբրեկչիաներ–1200մ³) նախատեսվում է պահեստավորել բացահանքի հյուսիսային մասում ժամանակավոր արտաքին լցակույտերում, առանձին: Բացահանքի շահագործման 3,2-րդ տարուց սկսած, ժամանակակից առաջացումները - 30500մ³, տուֆաբրեկչիաներ 109600մ³ ծավալներով պահեստավորվելու են մշակված տարածությունում:

Արտաքին լցակույտերի ընդհանուր զբաղեցրած տարածքը կազմում է 0,3հա: Առավելագույն բարձրությունը 10մ: Ժամանակակից առաջացումների ժամանակավոր լցակույտի զբաղեցրած տարածքը կազմում է 0,27հա, տուֆաբրեկչիաներինը - 0,03հա: Բացահանքի շահագործումն ավարտելուն զուգընթաց արտաքին լցակույտերից մակաբացման ապարները տեղափոխում են մշակված տարածություն: Մշակված տարածությունում, նախ հատակում փովում և հարթեցվում են տուֆաբրեկչիաները, ապա դրանց վրա ժամանակակից առաջացումները:

Մակաբացման ապարների արտադրողականությունը հաշվարկային տարում ընդունված է 7500մ³/տարի:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է բացահանքի արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, աշխատանքային հրապարակները, հանքախորշերը և մուտքային ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Տեխնիկական ջրամատակարարումն իրականացվում է ջրցան ավտոմեքենայով: Խմելու ջրի մատակարարումը կկատարվի ջրի կցիչ ցիստեռնով:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքավայրի տարածքում մակերևութային ջրերը բացակայում են: Հանքավայրի շահագործման ընթացքում ջրային ավազանի աղտոտում բացահանքի տարածքից չեն նախատեսվում:

Կատարվելու է բացահանքի լեռնատեխնիկական վերականգնում: Արտաքին ժամանակավոր լցակույտերից 11600խմ մակաբացման ապարները տեղափոխվելու են մշակված տարածություն, փռվելու են, ապա հարթեցվելու:

Ապարների բարձումը, տեղափոխումը և փռում հարթեցումը կատարվելու է էքսկավատոր-բուլդոզեր-ավտոինքնաթափ տրանսպորտային համալիրով: Ընդամենը ռեկուլտիվացման ծախսերը կկազմեն՝ 3011,3 հազ. դրամ:

Ռեկուլտիվացիայի տևողությունը կկազմի 16 օր, մակերեսը կկազմի է 5,3հա:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 150 հազ.դրամ:

Պատմության և մշակույթի հուշարձանների հողերի և հայցվող տեղամասի միջև հեռավորությունը կազմում է 7.6-ից 10.9կմ, բնության հուշարձաններից նվազագույնը հեռավորությունը 13կմ է:

Ղազարասարիի տուֆաավազաքարերի հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Հանքավայրի բուն տարածքում և մոտակայքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակներ չեն արձանագրվել:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրեկան 2 անգամ):
- Բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավորության սահմաններում կանաչապատման իրականացում:
- Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա զտիչների տեղադրում՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:
- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա, կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման, կամ երկրորդական վերամշակման համար:

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնում որպես մետաղական ջարդոն:
- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:
- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում կդատարկվի հատուկ ծառայության ուժերով:

Հանքավայրի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդի աղտոտման վերահսկման, պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Լոռու մարզի Աքորի բնակավայի վարչական ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 22 փետրվարի 2018 թվականի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտայի օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
- Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արթուր-Տարոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Ղազարասարի տուֆաավազաքարերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյան